

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Օտարազգայնացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Менк“.

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն)

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
խաւարանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Վրացիներ և հայեր: Ներքին տեսակետի վրէժն: Ներքին լուրեր: Արտաքին տեսակետի վրէժն: Ներքին լուրեր: Նամակ Պարսկաստանից: Մշակութային հետազոտութիւններ: Բանասիրական: Գրական միութիւն:

ՎՐԱՅԻՆՆԵՐ ԵՒ ՀԱՅԵՐ

Ինչքան էլ պատկասութիւններ ունենային վրացիները, մեզ հայերիս հետ համեմատելով, բայց մի բանի մէջ վրացիները մեզանից անհամեմատ բարձր են:

Ղշմարիտ է, վրացիները հայերիս պէս չունեն հարուստ պատմական անցեալ, չունեն մեր հին գրականութեան պէս հարուստ գրականութիւն, չունեն մեր նոր լեզուի պէս ճշգրտական, զարգացման բնորոշակ, ժամանակակից հարուստ լեզու, չունեն անկախ ազգային եկեղեցի, բայց ուրիշ կողմից նրանց մէջ ազգային ինքնաճանաչութիւնը աւելի զարգացած է, քան թէ հայերիս մէջ: Չը նայելով, որ վրացիները չունեն առանձին եկեղեցի, այլ

պատկանում են պետական կրօնին, նրանք պահպանել են իրանց մայրենի լեզուն, նրանք ոչ թէ միայն իրանք միշտ վրացերէն են խօսում իրանց մէջ, բայց և բարոյապէս ստիպում են իրանց հետ ապրող հայերին խօսել իրանց հետ վրացերէն լեզուով: Այդ բաւական չէ. հայը իր արհեստակից հային հայ չէ ճանաչում, եթէ սա ուրիշ կրօնին է պատկանում, քան թէ մեծամասնութիւնը, իսկ վրացիների մէջ այն աստիճան զօրեղ է ազգային ինքնաճանաչութեան ըզգացմունքը, որ նրանք կարողացան զբաւել դէպի իրանց ազգութիւնը ուրիշ ցեղին և ուրիշ կրօնին պատկանող ունհատներին: Հայ-կաթօլիկը թիֆլիսում, Ախալցխայում և Ղարսի նահանգում իրան վրացի է անուանում: Այս ցեղով հայ է, կրօնով կաթօլիկ, բայց վրացիները իրանց զօրեղ ազգային զգացմունքի միջոցով կարողացան զբաւել այդ հայերին և

համոզեցին նրանց որ իրանք վրացիներ են, որովհետեւ լեզուով վրացի են: Ուրեմն ողբան զօրեղ է ազգային ինքնաճանաչութեան զգացմունքը վրացիների մէջ, որ նրանք իրանց լեզուի միջոցով կարողանում են իրանց ազգային մարմինը աճեցնել, զբաւել լով դէպի իրանց ուրիշ ցեղին և ուրիշ կրօնին պատկանող անհատներին, իսկ հայերը անընդունակ են մինչև անգամ իրանց և իրանց արհեստակից այլակրօն անհատների մէջ հաստատել ազգային միութիւնը:

Այդ երեւոյթը պարզ ցոյց է տալիս որ ազգային սկզբունք պահպանողը կրօնը չէ, շատ անգամ ցեղին էլ չէ, այլ պիտաւորապէս հայրենիքն ու լեզուն է:

Մենք աւելի կասենք, ինչպէս ունեւարացիներն ապացուցել են հայրենիքն անգամ այն ոյժը չունի ազգութիւնը պահպանելու, որքան լեզուն:

Լեզուն է և միմիայն լեզուն, որ մարդուն դարձնում է այս կամ

այն ազգութեանը պատկանող: Եթէ հայերը չաշխատեն իրանց լեզուն պահպանելու, այլ վրացու հետ վրացերէն կը խօսեն, թիւրքերի մէջ ապրելով թիւրքերէն կը խօսեն, յոյնի հետ յունարէն, բիւրդի հետ քիւրդերէն կը խօսեն,—ինչքան էլ աշխատեն պահպանել իրանց կրօնը, դարձեալ վերջ ի վերջոյ կը կորցնեն իրանց ազգութիւնը:

Յունադաւան վրացին կարողանում է կաթօլիկ հային ազգութեամբ վրացի դարձնել, իսկ հայ լուսաւորչականը ոչ թէ միայն չէ կարողանում, բայց հրաժարվում է կաթօլիկ, բողոքական, մասմեդական և յունադաւան հային հայ ճանաչել և ազգութեամբ ու լեզուով նրանց հայ դարձնել:

Հայերի մեծ մասը իրանց հայրենիքում են ապրում, ունեն իրանց անկախ, ազգային եկեղեցի,—բայց քանի որ չեն պահպանում իրանց մայրենի լեզուն, նրանք կանհետանան որպէս ազգութիւն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍ ՄԻՈՒԹԻՒՆ

Բերկի վերջին կոնգրէսի վերջերս Թունստանի ու Չեռնոգորիայի վերաբերութեամբ կողմնակի կերպով մերժելու համար և եւրոպական պետութիւնների պահանջներին առջև դնելով թիւրքերի յարաբերւելու համար Բ. Թունստանից արեւմտական միութիւնը: Իսկ հայկական խնդրի վրէժն իր խանձարարի մէջ խնդրելու համար նա աշխատում է այժմ կազմել մի քրդական միութիւն:

Դեռ մի քանի ամիս առաջ Վ. Պոլսի թուրք մամուլը անսովորաբար սկսեց հռչակել քրդերի քաղաքական հրաշալիքները, որոցմով հայկական լեռները այդ վայրենի զաւթներին աշխատում էր ներկայացնել: Եւրոպայի աչքում ոչ միայն իբրեւ արեւելքի, այլ և իբրեւ արեւմուտքի լուսաւորիչներ: Մի այսպիսի երեւոյթական աչքաւար պոլիտիկան թուրք մամուլի կողմից, ստոր է ամեն կրիտիկայից, այն մամուլի, որ մի ժամանակ նրանք զօրեղ իրաւունք ընային, այն էլ, նրանց ոչնչացնելը, որպէս անպէտք և վնասակար մի տարր, որպէս զի ասիական թիւրքերի արեւելեան սահմանապահները ապառիկին այդ առաջակների անընդատ ապաւորութիւններից:

Սուլթան Աբդուլ Մեջիդը յայտնվեցաւ որպէս մի սպանալի գործիչ, քրդերին՝ ոչնչացնելու համար և նրանց անշուշտ վիճակված կը լինէր եւրոպական կոտորածը, եթէ այն ժամանակվայ և՛ լեռների դիպլոմատ և առաջին վեզիր Սալի փաշան չը մեղմէր սուլթանի բարկութիւնը: Խորամանկ վեզիրը կարողացաւ համոզել խալիֆները դիւրահաւան զահակալին, յայտնելով այն միտքը, թէ քրդերը թէև առաջակ, բայց մի և նոյն ժամանակ

նաև պատրաստի դիմադրել են թիւրքերի համար, և կառավարութիւնը պէտք է փոքր ի շատ զինանի նրանց անկարգութիւններին, որպէս զի, նրանք միջոցներ ունենային ապրելու և զարկաւորած ժամանակ ծառայելու որպէս քաջ պատերազմիչներ:

Իսկ այդ զինողութիւնը խիտ թանգ էր նրանք կառավարութեամբ: Ամայայնելով սահմանադրի ամբողջ զաւաճելը, վերջին չքաւորութեան մէջ ձգելով ժողովրդին, խանդարելով երկրագործութիւնը և վաճառականութիւնը, քրդերը, ոչ միայն իրանք հարկ չէին վճարում, բայց մի և նոյն ժամանակ զրկում էին տէրութեան գանձարանը որ և ինչ եկամուտ ստանալու այն երկրներից, որ այդ վայրենիները դարձրել էին իրանց յաղտահարութիւնների ասպարէզ:

Սուլթան Աբդուլ Մեջիդի կառավարութիւնը քրդերին զաւաճելու համար այն եղանակներով հասաւ, թէ պէտք էր նրանց զինացնել վրանաբանակ հովուի թափառարկի կիսանից և ընտելացնել երկրագործի հաստատարական կիսանից: Ամեն աշխատութիւններ ապարդիւն անցան Քրդերը մնացին միշտ աստանդական հովուներ և իրանց անասունների ջօտերով ամառը թափառում էին Հայաստանի հովիտներ լեռների վրայ, իսկ ձմեռը խնամում էին Տիգրիսի հովիտի վերջ տալիսարանների վրայ: Իսկ ինչ որ վերաբերում է նրանց զինավորակ անելուն,—այդ նոյնպէս մնաց անկատար, չը տարւում, որ Վանի փաշաներից մէկը հնարեց մի ծուլածուղի տուրք, որով քրդերը պարտաւորվում էին վճարել մի նշանակալի հարկ, եթէ կը շարունակէին զինել կրել:

Այդ միջոցներում սկսվեցան կառավարութեան ճնշումները քրդերի ցեղապետների վրայ: Բազմաթիւ լեռնա-բեկին տքտուրել և նրա ազգատանջի մեծ մասը սրից անցկացնել պէտք է համարել այն

աստիճանի հարաւաններից մէկը, որ թուրք կառավարութիւնը որ և ինչ ժամանակ հասուցել է քրդերին: Վրանից յետոյ քրդերը ցեղապետները դարձան կառավարութեան ներկայացուցիչների ձեռքում մի տեսակ արդիւնքի աղբիւր: Նրանք բանտարկւում էին, տանջւում էին, արքայում էին, և այդ բոլոր կատարվում էր ոչ այնքան երկիրը խաղաղացնելու նպատակով, որքան օգուտ էր բերում փաշաներին, որքան կաշառքներ ընդունելով, կրկին բաց էին թողնում կաշառքներին: Այսպէս և կանոն պահպանելու այդ ձեռք առին էր տալիս քրդեր աւազակներին աւելի ևս եւտելով յարատեւել իրանց յաղտահարութիւնների մէջ, կապիտալ ձեռք բերելու համար, որ նրանով կարողանային ազատվել, եթէ միտանալով կը պատահէր նրանց կաշառքներով լինել:

Այդ քրդերի հսկողութեամբ, սնիրաւացի ճնշումները, այդ անդադար հալածանքները մտաւ զին քրդերի մէջ մի աստիճանի թշնամութիւն դէպի թուրք կառավարութիւնը մասնաւորապէս և դէպի առհասարակ թուրքերը ընդհանրապէս: Խնդրում էին նրանց սովորական կիսանի եղանակը, զրկում էին նրանց ապրուստի միջոցներից, աւազակութիւնից, որը քրդերի ցեղային և աւանդական սովորութեամբ համարվում էր ոչ բողոքական անարարական մի պարագայով:

Այդ պատկերները դէպի թուրքերը, առիթ տուեց քրդերին աւելի մոտենալ հայերին և աւելի մտերմանալ նրանց հետ:

Քրդերի ամբողջ ժողովուրդը, բաժանված լինելով բազմաթիւ տարբեր և միմեանց հետ թշնամի ցեղերի, անկարելի էր, որ նրանք մէջ կազմվէր միութիւն, որով կարողանային ընդդիմանալ կառավարութեան ճնշումներին: Պատասխարված լինելով հայկական լեռների մէջ նրանք իրանց վրէժնեղութիւնը լրացնում էին նրանով, որ կողոպտելով երկրի մի մասը, հեղեղել նման անցնում

էին մի ուրիշ երկիր, և տեղային վարչութիւնները իրանց անդոր ուժերով երբեք չէին կարողանում վերջ դնել քրդերի անընդատ արշաւանքներին:

Իսկ այդ ցեղերի մէջ կային և անպիտաններ, որոնք համեմատաբար աւելի ճանգիւտ էին բնաւորութեամբ, որոնք, որպէս միամիտ հովուներ, ապրում էին նահապետական պարզ կեանքով: Այդ վերջինների ցեղապետները ոչ սակաւ անգամ դիմում էին հայ էֆենդիների և հայոց հոգևոր առաջնորդների օգնութեանը, թուրք կառավարիչների կամայականութիւնից պաշտպանութիւն գտնելու համար: Հայ էֆենդիները և հայոց հոգևոր առաջնորդները, որոնք աւելի նշանակալիւն ունէին կառավարութեան առջև, որպէս երկրի գլխատու և մեծամասնութիւն կազմող ազգաբնակչութեան ներկայացուցիչներ, չէին ինայում իրանց պաշտպանութիւնը, թէև այդ պաշտպանութիւնը շատ չաճելի չէր կարող լինել հայ ժողովրդին, որը պատմական ատելութիւն ունէր դէպի քրդերը ևս հասարակ բոլոր ցեղերը: Այդ էր պատճառը, որ Վանի առաջնորդ Պոզու վարդապետը յարուցելով մի աշակերտ կուսակցութիւն, այն պատճառով միայն, որ նա պաշտպանում էր քրդերի ցեղապետներին, նրանց հետ բարեկամութիւն էր պահպանում, և պատահած ժամանակ, իր սեպակաւ ծախքերով աղաւտում էր նրանց բանտերից: Նախնական տառն տարի Վանի հայերը բաժանված էին երկու կուսակցութեան, որոնցից մէկը արխատում էր պաշտօնից հեռացնել քրդապէս առաջնորդին, իսկ միւսը աշխատում էր պահպանել նրան: Այդ կուսիները երկար զբաղեցրին Վ. Պոլսի հայոց մամուլին և ոչ սակաւ հոգսեր պատճառեցին պատրիարքարանին:

Հայ առաջնորդների և հայ էֆենդիների քրդերի խաղաղապէս ցեղերին պաշտպանելու մի ուրիշ նպատակ չունէր, բացի նրանից, որ հայ վաճառականները այդ ցեղերի հետ առեւտրական յարաբերու-

Լեզուն է միայն, որ ջոկում է մի ազգութիւն միւս ազգութիւնից, լեզուն է միայն, որ ազգութեան գոյութեան հիմք է և ոչ մի ուրիշ հասարակական գործիչ նրա տեղը չունի չէ կարող:

Պոնէ օրինակ առնենք մեզ հարեան վրացիներից, որոնք մեզանից աւելի քաղաքակրթված ազգ չեն, բայց ունեն մեզանից աւելի ինքնաճանաչութիւն: Արարացի օրինակ առնենք, որ կարելի է գրաւել գէպի ազգութիւնը այլացեղ և այլակրօն անհատներին միմիայն մայրենի լեզուի միջոցով:

Այս մի վրացի չէ կայ որ կաթով լինէր, բոլորն էլ ցեղով և տիպով հայ են, բայց վրացիները կարողացան նրանց վրացիացնել լեզուի միջոցով: Անհրաճ իրանք համոզված են որ վրացի են:

Թող հայերը չը մոռանան որ ազգութեան միակ հաստատ և տեղական հիմքը լեզուն է:

Վրացիները մեզանից այդ կողմից բարձր են, որովհետեւ կարողացան համոզել հայ-կաթով լինին, որ կրօնը և ցեղը յիշել նշանակութիւն չունի ազգային տեսակետից. կարելի է ուրիշ կրօնին պատկանել, մինչև անգամ ուրիշ ցեղին պատկանել, բայց վրացի լինել. իսկ մենք նոյնը չունենք անելու մեր

ցեղակից, արինականից, այլակրօն հայերի հետ:

Այդ ամենալաւ ապացոյց է որ մինչև այժմ հայերը ազգութիւն չէին, այլ միայն մի ազգանոց, որովհետեւ միայն նրան էինք մեր ազգութեան անդամ համարում, որ մեր զաւանակից էր, թէկուզ նա բոլորովին չը գէտէր և մինչև անգամ արհամարհում էր մայրենի լեզուն:

Պարզ է որ այդ խառնուս հիմքի վրա ազգութիւնը երկար ժամանակ չէ կարող գոյութիւն ունենալ:

Այն հայը, որ հայերէն չը գիտէ, նա հայ չէ: Նա կարող է հայոց կրօնին պատկանել, բայց նա հայոց ազգութեանը չէ պատկանում: Ուրիշ կողմից այն հայը, որ թէև լուսաւորչական կրօնին չէ պատկանում, բայց հայերէն գիտէ, — նա հայ է, ազգութեամբ հայ է:

Այժմ թող հայերը իրանք դատեն՝ որն է ժամանակակից պահանջմանը աւելի համեմատ ազգային պատկանելը, թէ ազգութեամբ:

Ի հարկէ մենք ոչինչ նրա դէմ չունենք եթէ հայը երկուսն էլ միացնում է, այսինքն եթէ նա համ լուսաւորչական է, համ ազգութեամբ և լեզուով հայ է: Բայց դժբաղդութիւնն այն է որ թէ ստորին և թէ բարձր դա-

տակարգի լուսաւորչականների մեծ մասը այժմ ազգութեամբ այլ ևս հայ չեն, որովհետեւ շատ անգամ չեն իմանում հայերէն լեզուի մի բառն անգամ, ուրեմն չունեն այն ֆակտորը, որ ջոկում է մի ազգութիւն միւս ազգութիւնից, այլ միայն կազմում են մի առանձին ազանդ որ մոլեռանդ է գէպի իր կրօնը, բայց արհամարհանքով է վերաբերվում գէպի իր մայրենի լեզուն, ուրեմն և գէպի իր ազգութիւնը: Իսկ ազգութիւնը մայրենի լեզուի մէջն է:

Ուրեմն թող այժմ դատեն որքան ուղիղ է այն միտքը, թէ կրօնը նեցուկ էր ազգութեան, երբ որ այդ կրօնն ունեւորվ արհեստից կորցնել մայրենի լեզուն, որ միակ նեցուկ է ազգութեան:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՈՐ

Թիֆլիսեցի ա. Գրիգոր Աղաբեգեան հասցրել է մեզ 10 թուր յօդուտ այն հիւանդանոցի, որ հիմնվում է Վանի մէջ:

Պ. Տէր-Միքայէլեանի ձեռքով ստացանք 3 թուր ա. Միքայէլ Երանտեսեանցի յօդուտ հիւանդանոցի Վանի մէջ:

Կովկասեան ցեղաբանական կոմիտէի դատը «Մշակի» խմբագրի դէմ նշանակված է Թիֆլիսի Դատարանական Պալատում հոկտեմբերի 4-ին: Նախագահը կը լինի Միխայիլով, անդամները՝ Փր. Բախչաճ, Բուլոյ, Բակալով և Մայիսովսկի: Այդ միջոցով կամ Անդրեւի, կամ Սիմոնի, կամ Բի-կով:

Ա. Տէր-Միքայէլեանի ձեռքով ստացանք ա. Սարգիս Լազա-

րեանցի 11 թուր յօդուտ Վանի հիւանդանոցի: Այս յօդուտից 5 թուր պարտք ինքն է նստրում իսկ 6 թուր հաւաքված են սիրողների թատրոնական ներկայացումից:

«Մշակի» 148 համարում, ներքին լուրերում Համալսարանի գրած լուրը տպագրական սխալ է: Պէտք է լինի Համալսարանից և ոչ թէ Համալսարանի, որովհետեւ Պապիկ սրբազանը Համալսարանումն է հաւաքել 1500 թուր և Համալսարանի հին եկեղեցին է այդպիսի կեդոտոս գրութեան մէջ:

Կենդանիների հովանաւորութեան Թիֆլիսի ընկերութեան անդամները հրապարակում են շուրջ բերել ընկերութեան ընդհանուր ժողովին ներկայ սեպտեմբեր ամսի 28-ին, առաւօտեան ժամը 11-ին, գիւղատնտեսական ընկերութեան քննարանը, Բարիատինսկի փողոցի վրա, Ալեքսանդրեան այգիում:

Ի. Գ. Ի. Ի. Ի. մեզ գրում են: «Տեղական երկսեռ ուսումնարանները շատ անհոգ և թույլ դրութեան մէջ են: Հոգաբարձութիւնը ոչինչ բանի վրա ուշադրութիւն չէ դարձնում: Ուսուցիչները շատ դժգոհ են հոգաբարձուներից նրա համար, որ անցեալ թուականի ուսնիները դեռ ևս մինչև ցարդ չեն ստացել: Հրապարակում ենք այդ դպրոցների վրա պ. թեմական տեսչի ուշադրութիւնը:»

Նորերում Թիֆլիսի թուրք ազգաբնակչութիւնը բաց արեց մեր քաղաքում կառավարութեան իշխումը: Թուրքները մի օրինորդական դպրոց մասնական աղջկանց համար: Իսկ առաջին օրինակ է որ Անդրկովկասի մասնատնտեսների մէջ բացվում է մի օրինորդական դպրոց: Անդրկովկաս եւրոպականում մեր թուրք համալսարանացիներին:

Այս օրերս ներկայանում է «Մշակի» խմբագրատուն մի հայ պարոն Թուրք ազգաբնակչութիւնի մի պատանու հետ, որի ազգանունն է Բաբանտեսեան և որ պարոն Թուրքի խորթ որդի է: Պարոնը յայտնեց մեզ հետեւեալը: Պատանին Ներսիսեան դպրոցի որդեգիր էր, որի ուսման համար նրա խորթ հայրը վճարում էր տարեկան 200—300 թ., բայց դպրոցի հոգաբարձութիւնը այնու ամենայնիւ ամենամեծագէտ կերպով վերաբերվում էր գէպի պատանին: Պ. Թուրքը բաց արաւ մի կապոց և ցոյց տուեց մի շապիկ, որ որդեգիրը հագած ունէր երեք ամիս շարունակ առանց լուացած լինելու: Ինչ դրութեան մէջ էր շապիկը, անկարելի է նկարագրել. կեղոտ, պատռած, զքլոտած, այնպէս որ մի ամբողջ կտոր նրա վրա չէր երևում: Ամբողջ շապիկը բաղկացած էր ամենազգլիկ ցնցոտիներից:

Թիւրքերն ունէին, մատակարարում էին նրանց կենսական անհրաժեշտ պիտուքները և փոխարէնը բնականում էին նրանց հովուական արդիւնաբերութիւնը, որպիսի էին խոզ, պանիր, բուրձ և անասուններ: Շատ պարզ է, որ քրդերի կողմից թուրք կառավարութեան պայտօնատարներից վրէժնաւոր էր հայ փաճառակների, հայ կապիտալիստների շահերին, որովհետեւ քրդերը միշտ նրանց փողի պարտականութիւնն ունէին:

Այդ յարաբերութիւնները ստեղծեցին հայերի և քրդերի մի քանի ցեղերի մէջ սերտ հաւատարմութիւն, որը աւելի բարեկամական կերպարանք էր ստանում, որքան թուրքերը նեղացնում էին նրանց: Բայց կային հայերին և թիւրքերի ցեղեր: Այս վերջինները նոյնքան թիւրքաւոր էին հայերի հետ, որքան իրանց հարազատ ազգակիցների հետ: Սակաւ էր պատահում, որ քրդի մի ցեղ յարձակվում էր միւսի վրա և կողոպտում էր նրան և այսպիսով կոտոր, կոտորածը, անհայտութիւնը նրանց մէջ մնում էր որպէս ժառանգութիւն և անցնում էր սերունդից սերունդ:

Այդ կռիւների մէջ խռովվում էին և հայերը, Աղբալայ, Շատախի, Բուլանքի, Մոգաց երկրի և Սաւանցի հայերը ունէին իրանց դաշնակից քուրդ ցեղերին, որոնց հետ միացած, շատ անգամ կռւում էին ընդհանուր թշնամու դէմ: Այժմ համալսարան, այլ «եղբայր» ազանդին պատկանող քրդերը, միշտ հաւաքված լինելով իրանց մասնական ցեղակիցներից, հայերի հետ պահպանում էին բարեկամական յարաբերութիւններ: Հայերը այն աստիճան հաւատարմութիւն ունէին գէպի այդ ցեղը, որ իրանց անասունները յանձնում էին նրանց հովուներին պահելու, հայերի տան սպասարարները, աղակերպները, երկրագործական մշակները մեծ մասամբ եղբայր էին: Դրանք կատարում էին հայերի մի քանի կրօնական արարողութիւնները, պահում էին սուրբ Սարգիս, սուրբ

Դեդրդի պատերը, դոհ էին մատուցանում հայերի նշանաւոր ուխտատեղիներում, և սուրբ Գրիգոր Լուսաւորչին ու Բաբիթ մարգարէին համարում էին Ստոմոնի ընտրեալների ամենազգլիկները: Նորդերը համարեա բոլորը գիտէին հայոց լեզուով խօսել և մեր վարդապետներից մէկը միայն (որ հայ կղերից ժողովրդական մտքով ստացաւ «Տէր-Միքայէլ Երանտեսեան» մտածեց եղբայրների մէջ տալագործ ժողովուրդը) մտածեց եղբայրների մէջ տալագործ Լուսաւորչական կրօնը և գրազրկութիւն հայոց այդ-բնարանով:

Գրդերի և հայերի յարաբերութիւնները այս դրութեան մէջ էին մինչև վերջին ուսումնարանական պատերազմի ծագելը:

Պատերազմի ժամանակ թուրքաց կառավարութիւնը, նրան բոլորովին կրօնական բնաստութիւն տալով, շէյխներ, մուֆթիների և դպիկների ձեռքով կարողացաւ վառել քրդերի ֆանատիկութիւնը: Սակայն բոլոր քուրդ հրոսակները, որ հաղորդներով դիմում էին Տէր-Լուսաւորչի գոհորդի դէմ,—բոլորը կոտւում էին իրանց հոգեւորականների առաջնորդութեամբ, որպիսիներն էին Շէյխ-Ջէլալ-էդդին և Շէյխ-Իբրահիմը:

Թէև պատերազմի ժամանակ քուրդ հրոսակները մի նշանաւոր օգուտ չը կարողացան բերել, թէև նրանք կողոպտում էին, այրում էին և աւերակ էին դարձնում բուն թուրքաց երկրները, որոնք դեռ գրաւված չէին ռուսներից, այսու ամենայնիւ, այդ բարբարոսութիւնները դարձրին քրդերի վրա անգլիական ազնւոյների ուշադրութիւնը, որոնք Հայաստանում տարածված էին թուրքաց բանակների մէջ: Անգլիացի զորան Հայաստանում երկու զինուոր ցեղեր, որոնցից մէկը, քրդերը ատում էին «զաւարներին» և խառնվեցան թուրքաց զօրքերի հետ, իսկ միւսը, հայերը համարվում էին «զաւարներին» և ամեն հնարներ գործ էին դնում հեղափոխելու ռուսաց յաղթութիւնները:

Գրդերի հակակրթութիւնը գէպի ռուսները և հայերի համակրթութիւնը,—այդ երկու հակառակ արտայայտութիւնները բաւական էին մի սխալ գաղափար տալու. անգլիացիներին, յորինելու այն պատճառ, որ նրանք նպատակ ունէին կազմել Հայաստանի վերաբերութեամբ:

Բայց անգլիացիք չուզեցին մտածել, եթէ թուրքաց հայերը համակրթեամբ էին վերաբերվում գէպի ռուսները,—այդ ունէր իր բնական պատճառները. նրանք տեսնում էին իրանց ազգակիցներին ռուսական Հայաստանում աւելի բարեկամութեամբ մ. շ. մինչև իրանք օրըստօրէ մաշվում և ոչնչանում էին մի անկարգ և նեղութեամբ կառավարութեան բարբարոսութիւնից: Եթէ այդ կառավարութիւնը փոխվէր գէպի լաւը, անստորակոյտ, հայերը կը հաշտվէին նրա հետ:

Բայց հայերի վիճակը շատ չէր հետաքրքրում անգլիացիներին. նրանց մի ուրիշ բան էր հարկաւոր: — Նրանց հարկաւոր էր մի զօրաւոր պատանի, որ կանգնեցնէին ռուսների առջև, փակէին նրանց ապագայ աշխարհակալութիւնների ճանապարհը գէպի Հայաստան, թող չը տալով նրանց մտնելու Նիքոսի, որով իրանց Հնդկաստանի շահերը պահպանւած էին համարում: Սակայն պատանիք, անգլիացիների կարծեով, կարելի էր կառուցանել մի միայն քրդերից, որովհետեւ հայերին հաւատալ և հայերի վրա յայտ դնել նրանք չէին կարող, մանաւանդ որ, քրդերին աւելի ընդունակ էին դառնում իրանց նպատակների համար. քրդերը իրանց ձեռքում դէպ ունէին, իսկ հայերը ոչ:

Այդ էր պատճառը, երբ պատերազմի ժամանակ զանազան հայկական թաղաքներում նշանակվեցան անգլիական կոնսուլներ, Բիկոնսթրիլի միջնորդութեան և նրա Կ. Օթլի ներկայացուցչի Լէպր-դի առաջին հոգաբ. եղաւ. Հայաստանը Գրդերի տան անունով մկրտել և քրդական միութեան սկիզբը դնել:

Պատերազմից յետոյ անգլիական կոնսուլները սկսեցին առանձին ուշադրութիւն դարձնել քուրդ տարրի վրա, երեւակայական միութեանը նրանց մէջ կազմելու մտքով: Անգլիան նրանց առաջ քաշել, հայերին յետ մղել, սկսեցին նրանց ցեղակիցների և շէյխների հետ բարեկամութիւն հաստատել և ամեն միջոցներ գործ դնել, որ քրդերի անջատված, և միմեանց հետ թշնամական յարաբերութիւն ունեցող ցեղերի ընդհանուր ուժերը միացնէին մի ամբողջութեան մէջ: Իսկ ոչ միայն դժուարին, այլ անհաւանք էր: Դարբնով կազմված ժառանգական անհայտութիւնը քրդերի հարկաւոր ցեղերի մէջ չէր կարելի անգլիական քաղաքագիտութեան հրաշքով միմեանց միմեանցանից նեղ, մանաւանդ երբ վարենի քուրդը քաղաքագիտական ներքութեան հետ շուտով ընտանալ չէր կարող:

Այդ բոլոր ջանքերի ցեղանքը այն եղաւ, որ քրդերը, տեսնելով, որ իրանց վրա ուշադրութիւն են դարձնում, աւելի երես առեցին, աւելի յանդուգն դարձան, — և հէջն այն ժամանակ, երբ թուրքացապետական քրիստոնեաների կեանքի ապահովութեան վրա էր խօսվում, երբ ռուսաց բանակը կանգնած էր Սան-Ստեֆանոյ մէջ: — Թնուտի կողմնում, քրդերը սկսեցին կոտորել հայերին, իսկ Աղբալայ Բաշկալի կողմում — Շէյխ-Իբրահիմը ոչնչացրեց աւելի քան յիսուն հայոց գիւղեր, և արժանացաւ Վանի անգլիական կոնսուլի սիրովոր այցելութեանը:

Բիկոնսթրիլի միջնորդութեան ընկնելուց յետոյ յիշեալ երևակայական պատանիքը —այդ արհեստական խաբուղ չէր,— ինքն իրան քաղաքացեալ: Քրդական միութեան և նրա Կ. Օթլի ներկայացուցչի Լէպր-դի առաջին հոգաբ. եղաւ. Հայաստանը Գրդերի տան անունով մկրտել և քրդական միութեան սկիզբը դնել:

(Կը շարունակվի)

20 մուսուլմաններ որ Ներսիսեան դպրոցը ունի այժմ 1000 ռուբլ տարեկան եկամուտից աւելի: Եւ Ներսիսեան դպրոցը կարելի է տեսնել պ. Խուբովի տանը: Պատահական էր հասնել պատանուն Ներսիսեան դպրոցից և տալ նրան մի գերմանացու պանսիօն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՍԿԱԼԱ

Փարիզից լրագրիւններն հաղորդում են հետեւեալ տեղեկութիւնները:

Մի քանի օր է, որ Ֆրանսիացիները միջառարկան դժուարութիւններն ապառնալիք են եւնթարկված: Քէպէտ նրա պատճառը շատ չնչին է, բայց քաղաքական և քաղաքական շրջանները անտարբեր չը մնան դէպի այդ դժուարութիւնները: Փանի որ եւրօպական միացեալ նաւատորմները շրջ են անում Իռլանդիոյ առաջ, որ կաւրո է համաշխարային հրդեհ գցել, ցաւալի է տեսնել որ մի մեծ աղբուրթիւն կառավարող անձինք դժուարութիւններ են պատճառում մի քանի տասնեակ հոգեւորականներին արձակելու հարցի պատճառով:

Սեպտեմբերի 15-ին Փարիզի մէջ պէտք է միմիայնակ խորհուրդ լինէր Ֆրեյսինի և Գոմպանի մէջ պատահած անբաւականութեան մարտի հրամանների առիթով վերջ տալու համար: Եթէ Ֆրանսիական կառավարութիւնը հեռանար սահմանադրական ծանրութիւնից, այդպիսի անցքը շուտ կը վերջանար: Նրա անդրկական արտաքին գործերի միմիայն չը կամեցաւ Հնդկաստանից Մայտա կղզին գործեր կանչել Բիկոնսթրիլի դանկութեան համեմատ, նա հրաժարական տուեց: Այս օրինակին հետեւելով Ֆրանսիական ներքին գործերի միմիայն Կոնստան կաւրո էր հրաժարական տալ, եթէ նա չէր հաւանում Ֆրեյսինի խաղաղաւոր քաղաքականութիւնը: Այս դէպքում դժուարութիւն չէր պատահի և միմիայնակ արտաքին կարգի խորհուրդներ չէին հարկաւորվի: Բայց այս դէպքում Կոնստան մի գործիք էր Վամբետայի ձեռքին: Սա հաւանութիւն չը տուեց Ֆրեյսինի քաղաքականութեանը այն պատճառով որ առաջին միմիայն չէր բաժանում նրա հայեացքները լուսական խնդրի վերաբերութեամբ:

Ֆրեյսինի անկման համար բաւական էր որ նա գրկվեցաւ Վամբետայի պաշտօնութիւնից: Քէ Գրեյի և թէ միմիայնակ չը ստիպված էին թողնել իրանց ամառանոցները և Փարիզ գալ Վամբետայից հաղորդած գործը կարգի բերելու համար, իսկ ինքը Վամբետայ գնաց որս անելու, ինք թէ գործին բոլորովին մասնակից չէ: Վերջին օրերում Գրեյի նախագահութեամբ միմիայնակ չորս խորհուրդներ կայացան, որոնց ժամանակ քննվում էր հոգեւոր միաբանութիւնների հարցը: Առաջին փուլի ժամանակ արդէն երեւաց, որ Ֆրեյսինի և Կոնստանի մէջ կատարեալ անհամաձայնութիւն է աւելում: Ֆրեյսինի պնդում էր, որ թէպէտ կառավարութիւնը պատ է գործելու համար, բայց կարելի չէր իսկոյն իրադրութիւն մարտի հրամանները հրդեհ որ միաբանութիւնների վերաբերութեամբ: Ներքին գործերի միմիայն ընդհանրապէս պնդում էր, թէ հարկաւոր էր քննա մի միաբանութեան վրա ապացուցանել, որ մարտի հրամանները ոյժ ունենան, որ ժուլ Ֆրեյսինի պաշտպանում էր ընկերոջը: Նրեք նիստերը անաջող հետեւեալներն ունեցան և վերջին նիստի ժա-

մանակ Գրեյի օգնութեամբ Ֆրեյսինին յաղթեց, միայն թէ այդ յաղթութիւնը երկարատեւ չի լինի:

Այս անցքի վրա մտածելով, կարելի է այն եղբայրացութեան հասնել, որ եթէ Վամբետայ շարունակէ Ֆրանսիայի անսահմանադրական առաջնորդի դերը խաղալ, Ֆրանսիայի մէջ ոչ մի միմիայնակութիւն երկարատեւ չէ կարող լինել:

«ԴՈՒՍԵ» լրագրի մէջ կարդում ենք հետեւեալ առաջնորդող յօդուածը:

Ֆրանսիական նոր միմիայնակութեան առաջնորդ ժուլ Ֆրեյսինի դեռ ևս չէ ընտրել արտաքին գործերի միմիայն: Գործի այսպիսի յետաձգութիւնը շատ հասկանալի է, որովհետեւ արտաքին գործերի միմիայնը ոչ թէ միայն այդ պաշտօնը վարելու համար ընդունակ մարդ պէտք է լինի, այլ և նրա քաղաքական հայացքները չը պէտք է դաժնալիքն Կամբետայի հայեացքներից: Այդ պաշտօնի համար ամենից յարմար է Ֆրանսիական այժմեան դեպքանը Լօնդօնում: Եւ մեյ-մեյ-Լալուր: Բայց սրա միմիայն նշանակելը օտար պետութիւնները հազիւ թէ հաւանեն:

Ֆրանսիական այժմեան դեպքանին Լօնդօնում դիպլոմատները բոլորովին չեն համակրում: Նա չափազանց ատելի է Ֆրանսիական միապետական կուսակցութեան անդամներին, որոնք բոլոր միջոցներով աշխատում էին օտար պետութիւնների առաջ նրան վնասակար և արինարար արմատական ցոյց տալու համար: Այդ աշխատանքները կատարելով աշխատանքան: Նայմեյ-Լալուրի անունը եւրօպական պահպանողականների առաջ չափազանց արմատականութեան նշանաբան դարձաւ և նրան միմիայն նշանակելը վատ ազդեցութիւն կը գործէր: Քէպէտ անգլիական կառավարութիւնը համաձայնեցաւ, որ նա դեպքան նշանակվի Լօնդօնի մէջ, այնուամենայնիւ այդ հանգամանքը նրան չօգնեց: Արտաքին գործերի միմիայն նշանակելու մասին երեւի Գրեյի ստիպված կը լինի օտար պետութիւնների կարծիքը հարցնել և այդպիսով Նայմեյ-Լալուր առժամանակ կը շարունակի դեպքանի պաշտօնը վարել մինչև հանգամանքներ փոխվեն: Առժամանակ միմիայն կը նշանակվի ծովային ժօրեա կամ ծիսօ, որոնք աննշան անձնաւորութիւններ են:

Իսկապէս վաղ թէ ուշ Նայմեյ-Լալուր պէտք է ստանայ արտաքին գործերի միմիայնի պաշտօնը, որ կատարելապէս բաժանում է Վամբետայի քաղաքական բոլոր կարծիքները:

ՆԱՄԱԿ ՊԱՐԱՎԱՍՏԱՆԻՑ

Փարիզ, 10 սեպտեմբեր

Սալմատ գաւառից գրում են, որ երբ Ստրասբուրգի միմիայնակ արտաքին գործեր արեւելիսկոյն ապեւութիւն գործեց այդ գաւառին, նրա առաջին հոգսը եղաւ բացանել մի դպրոց աւելի ընդարձակ ծրագրով: Սրազանք հրաւրեց իր մօտ տեղային հայ հասարակութեան գլխաւոր ներկայացուցիչներին, դպրոցի անունով ստորագրութիւն բացվեցաւ, որի գումարը հասաւ 400 թուանի: Ստրասբուրգի շարունակվում է:

Սրդեբիլ քաղաքից գրում են, որ տեղային մուշտիլի (չոգեորականների գլխաւորը) պաշտօնապէս հրաւրեց, եթէ անձրեային օրերում քրիստոնեաները համարձակվեն փողոց կամ շուկայ դուրս գալ, ամեն մի մասնատական իրաւունք ունի նրանց սպանելու, որովհետեւ պարսկիների կրօնական օրէնքով եթէ քրիստոնեան թրջված շրթերով դիպելու լինի մասնատականին, կարող է պղծել նրան:

Ռաշա քաղաքից գրում են, որ այդտեղ մի ամբողջ շարքով անընդհատ անձրեւ տեղաց, յետոյ մի տարսափելի մրիկ բարձրացաւ, որ անտառներում պահպան, հարկաւորապէս ձառքերը արմատա-

խել էր անում: Անդալիսի մէջ շատ Շամալ կոչված պալատը մրիկը չհիմարտապէս անելով Կասպից ծովը նետեց: «Կուսայ» կոչված շոգեւոր փոթորիկներից մըկելով ձգվեցաւ Անդալիսի ցամաքի վրա: «Բօդրան» անունով շոգեւորը, որ լինէր էր ասպրանքով, ընկզմվեցաւ ծովի մէջ: Մի այլ շոգեւոր ևս, «Հալի-Նէյ-Ալի» անունով, որ դիմում էր դէպի Բագու, որի վրա կային մինչև 300 ուսուսոր մասնատականներ, որոնք Մէքքայ պիտի գնային, այդ շոգեւորը կորած է, յայտնի չէ: Թէ ինչ է պատահել նրա հետ:

Սօվուկ-Բուլախ քաղաքից գրում են թէ այն կողմերի քրդերը, բոլորը Մարթենի հրացաններով զինված, Շէյխ-Բադուլլահի առաջնորդութեամբ ապստամբվեցան պարսից կառավարութեան դէմ: Քրդերը ինքնավարութիւն են պահանջում: Քանի որ առաջ Թաւրիզի մի քանի հազար հեծելազօր է մի քանի զուգէ հետակ զօր ուղարկվեցաւ քրդերին դապելու համար: Սօվուկ-Բուլախի հայ վաճառականները, որոնք մեծ գործեր օժեն անտեղ, թողեցին այդ քաղաքը: Շէյխ-Բադուլլահը, որ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ մեծ վնաս հասցրեց թուրքաց չապատանին, այժմ ըսկիւն է Պարսկաստանում աւերածներ գործել:

Թիւրքաց չապատանի Վան քաղաքից համարում են մեղ հետեւալ տուրքը: Սամի-Խալայ մի աւազակին կաշառելով, կամեցել էր սպանել տալ Խրիմեան հայրիկին. այդ փորձը անաջող անցաւ: Սրազանք համարեա մի հրաշքով ազատվեցաւ:

Թաւրիզի ազգային դպրոցի նոր տեսուչը դադարեց է միայն վարժապետների ուսուցիչ աւելացնելով, թղթերի վրա նոր կանոններ գրելով, բայց չը գործադրելով, դասատուների պատճառը դանազան անկող թղթերով դարձրեցին, և այլ այսպիսի ֆորմալիստութիւններով: Ամեն օր ժողով, ժողով, բայց ոչինչ արդիւնք չը կայ: Նոր տեսիլ նոր կարգադրութեան գլխաւոր արդիւնքն այն եղաւ, որ չքաւոր աշակերտների վրա վճար նշանակեց և դրանով աղքատներին զրկեց դպրոցից: Մինչդեռ առաջ դպրոցի բոլոր աշակերտները, թէ աղքատ և թէ հարուստ, ձրի էին ուսանում:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐԻԶ, 19 սեպտեմբերի: «Time» լրագրի հաղորդած լուրը Իռլանդիոյն այրելու մասին հերքվում է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 18 սեպտեմբերի: «НОВОЕ ВРЕМЯ» լրագրին Կ. Պօլսից հեռագրում են, պետութիւնների բողոքից յետոյ սուլթանը այնպիսի դրութեան մէջ ընկաւ, որ անդամայն լինելու մօտ է: Գործերի դրութիւնը Արդու-Արդի վերջին օրերն է յիշեցնում: Շատերը սպասում են, որ պալատի մէջ խառնակութիւններ կը պատահեն:

Կ. ՊՈԼԻՍ, 19 սեպտեմբերի: Դեպքանները ստորագրեցին մի պրօթօկոլ, որով պետութիւնները ապացուցանում են իրանց կատարեալ անհրաժեշտութիւնը Թուրքիի դաշնագիրը իրագործելու մէջ: Պետութիւնները պարտաւորվում են իրանց անհրաժեշտական շահերի ետեւից չընկնել, չը ձգտել երկիրներ, առեւտրական շահեր կամ բացառական ազդեցութիւն ձեռք բերելու:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 19 սեպտեմբերի: Պետական բանկի 5¹/₁₀ տոմսակը պաշտին շրջանի արժէ 94 ռ. 55 կ., երկրորդ 92 ռ. 37 կ., երրորդ 93 ռ. 35 կ., չորրորդ 92 ռ. 50 կ., ներքին 5¹/₁₀ տոմսին փոխառութեան տոմսակը արժէ 220 ռ. 50 կ., երկրորդ 216 ռ. 25 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը 91 ռ., երկրորդ 90 ռ. 87 կ., երրորդ 91 ռ., ոսկի 7 ռ. 98 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24¹/₁₀ պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա 211 մարկ: Փարիզի վրա 261 Ֆր. 50 սանտիմ: Բորսայի տրամադրութիւնը հանգիստ է:

ԼՕՆԴՈՆ, 19 սեպտեմբերի: Անգլիական միմիայնակների խորհուրդի նիստից յետոյ Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Ռուսաստանի և Թիւրքիայի դեպքանները խորհրդակցեցին Գրեյի վրէժի հետ արտաքին գոր-

ծերի միմիայնակութեան մէջ: «Time» լրագրի հաղորդում է, որ, չը նայելով պատահած արդիւնքներին, պետութիւնների համաձայնութիւնը աւելի ամրանում է: «Daily News» լրագրի հաղորդում է, թէ միմիայնակների խորհուրդը հաւանեց դեպքանների արած քայլը որոնք հրաժարվեցան յետ առնել համաձայն գրութիւնը: Կառավարութիւնը չի փոխի իր դիտաւորութիւնը: Այդ առարկայի վերաբերութեամբ բոլոր միմիայնակները համաձայն են միմեանց հետ: Գործի նորից յետաձգելը, կամ կամակորութիւնը Բ. Գրան կողմից՝ Դարգանի վրա գործողութիւնների սկսվելու պատճառ կը դառնայ: Մարիզ Հարսինգտոն կուղեորի Բեյմօրալ միմիայնակութեան եւթագրութիւնները թագուհուհու ներկայացնելու համար:

ՓԱՐԻԶ, 19 սեպտեմբերի: Կառավարութիւնը հաստատ վճռել է չը հեռանալ եւրօպական համաձայնութիւնից:

ԼՕՆԴՈՆ, 20 սեպտեմբերի: Եզուց դարձեալ լինելու է միմիայնակների խորհուրդ, այդ պատճառով մարիզ Հարսինգտոն յետաձգեց իր ճանապարհորդութիւնը դէպի Բեյմօրալ:

ՄԵԼԲՈՐՆ, 20 սեպտեմբերի: Նրեկ բացվեց աշխարհահանգէս:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 20 սեպտեմբերի: «ОТЕЧЕСТВЕННЫЕ ЗАПИСКИ» ամսագրի մէջ տպված է կոմ Լօրիս-Մելիքով հրաւրեց նշանաւոր մամուլի խմբագիրներին, որպէս զի մեկն նրանց կառավարութեան իսկական դիտաւորութիւնները ներքին վերանորոգութիւնների մասին և այդպիսով նախադրութեան մէջ անհիմն յոյսեր ծագեցնելուց: Այդ ժամանակ կոմ Լօրիս-Մելիքով մեկնեց նախագծի հետեւալ հինգ կէտերը. 1) դասակարգային հիմնարկութիւններին շնորհած իրաւունքների ամենամեծ ապահովութիւնը և նրանց գործունէութեան սահմանների ընդարձակելը հարկաւոր եղածին համեմատ, 2) պոլիցիական հիմնարկութիւնների համաձայնեցնելը նոր կարգադրութիւնների պայմանների հետ, 3) տեղական հիմնարկութիւնների գործին մասնակցելու իրաւունքների ուժեղացնելը հակակնարօնական ուղղութեամբ, 4) տեղական ազգաբնակչութեան պէտքերի մանրամասն հետազօտութիւնը, այդ նպատակին հասնելու համար արդէն իրաւունք է ստացված, որ սեւ նաւորները քննեն մի քանի նահանգներ, 5) մամուլին միջոց տալ քննել կառավարութեան գնահատան ձեռնարկութիւններ, վերջիններ, կարգադրութիւններ միայն այն պայմանով, որ մամուլը չը յափշտակէ, կամ չը վրդովէ հասարակական կարծիքը իր երազական ցնորքներով:

ԳՐԱՎՈՋԱ, 20 սեպտեմբերի: Միացեալ նաւատորմը հրաման ստացաւ պատրաստ լինել սեպտեմբերի 22-ին Ցէօթօ ուղևորվելու համար:

ՓԱՐԻԶ, 20 սեպտեմբերի: Կառավարութիւնը հրաժարվեցաւ թղթաւորութիւն տալ սեպտեմբերի 21-ին միտինգ կազմել, որ կամենում էր Բօշթօ և ուղղված էր ծովային ցոյցի դէմ:

ՐԱԳՈՒՋԱ, 20 սեպտեմբերի: Փեմբուքօ ռուսաց նաւը ուղևորվեցաւ արաւական ջրերը հետախուզութիւններ անելու համար: Չերնօգօրիական կառավարութիւնը առաջարկեց Ցէտինիէի ալբանի վաճառականներին վերջացնել իրանց գործերը և հեռանալ:

ԲԵՐԼԻՆ, 20 սեպտեմբերի: Միացեալ խորհուրդը հրաւրված է հաւաքվել հօկտեմբերի 8-ին:

Խմբագիր-հրատարակող ԳԻՒԳՐ ԱՐԴՐՈՒՆԻ

Типографія братьевъ Давидовыхъ